

«ՀԱՆՌԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ն ԵՒ ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Ուղիղ հարիւր տարի առաջ՝ 1887 թ. Վիեննայում սկսեց լոյս տեսնել Մխիթարեան Միաբանութեան պաշտօնական ամսագիր «Հանդէս ամսօրեայ»-ն: Իբրեւ արժանաւոր շառաւիղ երջանկայիշատակ Մխիթար Աբբաճօր ստեղծած հայ նոր լուսաւորութեան գործի եւ լաւագոյն յետնորդ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան 144-ամեայ «Բազմավէպ» հանդէսի, «Հանդէս ամսօրեայ»-ն իր երկարակեցութեամբ երկրորդ տեղն է գրաւում բովանդակ հայ պարբերական մամուլի պատմութեան մէջ: Նա հարիւր տարի շարունակ մնաց պատնէշի վրայ ի դին ամէն զոհողութեան բացառիկ դեր կատարեց հայագիտութեան զարգացման գործում: Նա դիմագրաւեց ամէն մի արգելք, քանի որ նրա լուսեղէն փարոսի սիւները դարձան հայագիտութեան մեծանուն նուիրեալներ՝ Այտընեաններ, Տաշեաններ, Ակինեաններ, Ոսկեաններ եւ այլ մտքի հսկաներ: Նրա կեանքի յաւերժացման նպաստեցին հայ եւ օտար բազմաբեղուն հայագէտների սերունդներ՝ Աճառեան, Մանանդեան, Աբեղեան, Բասմաջեան, Բիւզանդացի, Լէօ, Օրմանեան, Յովսէփեան, Ալպոյաճեան, Զոպանեան, Տէր-Ներսէսեան, Սիրունի, դոկտ. Թորգոմեան, Յ. Անասեան եւ կամ Հիւբշման, Մարկուարտ, Մակլեր, Մառ, Մեյէ, Կարստ, Նորգա, Բընըցեանու, Շիւց եւ այնքան ուրիշներ եւ Մխիթարեան հայագիտական դպրոցի մեծ թուով մշակներ իրենց սիրտն ու հոգին նուիրեցին սոյն պարբերականի գոյատեւման համար:

«Հանդէս ամսօրեայ»-ի հարիւրամեայ էջերի զննումն իսկ իր ընդգրկած հայագիտական բազմազան եւ բազմաբովանդակ պարունակութեամբ մեծ ակնածանք է ազդում նորանոր սերունդներին: Նոյն «Հանդէս ամսօրեայ»-ի ծնունդն են նաեւ նրա բացառիկ համարները: Անմիջականօրէն դարձեալ նրանից ծնունդն են աւելի քան այն երկու հարիւր երեսուն հատորները, որոնք «Հանդէս ամսօրեայ»-ի «Ազգային մատենադարանի» մատենաշարը կազմեցին: Շնորհիւ հայ անխորտակելի ճիգին, յետեղեռնեան շրջանի հայութեան ապրած հրաշապատում վերածնութեան մէջ «Հանդէս ամսօրեայ»-ն իր կապը միշտ պահած մեր վե-

րածաղկող Հայրենիքի եւ համայն հայութեան հետ, խիստ կարեւոր նշանակութիւն ունեցաւ հայագիտութեան գրեթէ բոլոր ճիւղերի զարգացման մէջ:

Անցնող տարիներին «Հանդէս ամսօրեայ»-ն բովանդակ հայագիտական բազմատեսակ նիւթերի հետ միասին, կարեւոր տեղ յատկացրեց նաեւ հայ գաղթավայրերի պատմութեան: Սակայն անհրաժեշտ է նշել, որ բովանդակ հայ մամուլի պատմութեան մէջ ոչ մի հայագիտական ամսագիր կամ հանդէս իր էջերը այնքան մեծ սիրով չտրամադրեց Տրանսիլվանիայի հայ գաղութի պատմութեան հիմնաւոր շարադրման, ինչքան «Հանդէս ամսօրեայ»-ն: Այս հարցում սկսած իր սկզբնական շրջանից նա հետեւեց իր աւագ նախորդի՝ Վիեննայի Մխիթարեանների պաշտօնաթերթ «Ներուպա» (1847-1868) կիսամսեային, ուր 1849-1851 թթ. լոյս տեսան անստորագիր, սակայն անշուշտ մի տրանսիլվանահայի կողմից գրուած «Առտեալի եւ Մաճառատանի հայերը» յօդուածաշարը, ուր առաջին ուշագրաւ տեղեկութիւններն են բերուել Տրանսիլվանիայի հայերի անցեալի եւ ներկայի մասին: Նշենք նաեւ ի պատիւ «Ներուպայի», որ նա միակ պարբերականն էր հայ իրականութեան մէջ, որ քաջութիւն ունեցաւ, այն էլ Վիեննայում, իր համակրութիւնը ցուցաբերելու հանդէպ Տրանսիլվանիայի յեղափոխական շարժումներին եւ վեր հանելու նաեւ հայագրի գորապետների խաղացած դերը յիշեալ շարժումներին:

Իբրեւ անմիջական հետեւանք 1848-1849 թթ. Տրանսիլվանիայում ծաւալած յիշեալ շարժումների եւ տեղի ժողովուրդների ապրած ազգային զարթոնքի, յիշեալ նահանգի նաեւ հայերի մօտ 19-րդ դարի երկրորդ կէտը նշանաւորուեց պատմագրութեան բացառիկ եւ իր նախընթացը չունեցող զարգացմամբ: Անձնուէր հայորդիների կողմից կատարուած այդ քայլը վերջին մի փորձ էր իր օրհասը մօտեցած Տրանսիլվանիայի հայութեան ճանաչելի դարձնելու

իր արմատները եւ թուժք կանգնեցնելու ձուլման համայնակուլ ալիքների դէմ:

Տրանսիլվանահայ պատմաբաններից Պաշիկ Լուքաչեան (1804–1876) 1859 թ. Վիեննայում հրատարակեց «Հայերը Տրանսիլվանիայում» թէկէ հակիրճ, սակայն արժեքաւոր լատիներէն երկը եւ յանկարծ միջազգային ասպարէզ դուրս բերեց հնամենի հայ գաղութի պատմութիւնը: Դուկաս Աւետիքեան (1847–1909) հեղինակեց կարեւորագոյն հայաքաղաքներից, Նիսաբէթուպուսի առաջին մենագրութիւնը՝ 1896 թ., այնինչ անխոնջ Պաշիկ Սոնգոտեան (Աստուածատուրեան 1843–1907) երեք հատորներ նուիրեց Գեուլա նշանաւոր հայաքաղաքի պատմութեան (1893, 1901–1903), արժանանալով Գեուլայի պատմահայր պատուանունին, դարձեալ նրան եւ պատկանում նաեւ «Հունգարահայ գերդաստանների տոհմագրութիւնը» (1898) բառարանը եւ «Հունգարահայերի ազգագրութիւնը» (1903) մեծարժէք մենագրութիւնները եւ մանաւանդ 21 տարի շարունակ մինչեւ իր կեանքի վերջին շունչը իր խմբագրած եւ հրատարակած «Արմենիա» հունգարերէն հայագիտական ամսագիրը, որ բացառիկ մի գանձարան է Տրանսիլվանիայի հայերի ինքնաճանաչման եւ ինքնահաստատման համար: Անտոն Մոլնարեան (1848–1902) հեղինակեց Գեուլայի տեղագրութիւնը (1871) եւ դարձաւ Պ. Սոնգոտեանից յետոյ «Արմենիա»-ի ամենաբեղմնաւոր երկրորդ աշխատակիցը, գրելով 172 հայագիտական յօդուածներ: Վերջապէս Յուլիոս Միրզայեան (Դյուլա Մերզա 1861–1943) գրեց շուրջ 60 հայագիտական գրքոյկներ ու յօդուածներ:

Վերոյիշեալ հունգարերէնով հրատարակուած մենագրութիւնները հիմնականում մատչելի դարձան ոչ միայն հունգար եւ օտար, այլեւ իրենց լեզուն մոռանալ սկսող հայերի համար: Սակայն հակառակ իրենց ակնբախ առաւելութեան եւ մեծ նշանակութեան, յիշեալ երկասիրութիւնները դեռեւս մինչեւ օրս հիմնականում մատչելի չդարձան հայ ընթերցողին ու հայագէտին: Տրանսիլվանիայի հայոց միակ պատմաբանը, որ իր գործերը գրեց հայերէնով եւ այդպէս մատչելի դարձաւ նաեւ հայ հասարակութեան հանդիսացաւ բնիկ Գեուլացի, Վիեննայի Միթիթարեան Միաբանութեան անդամ եւ ապա նոյն Միաբանութեան արքահայր Հ. Գրիգոր

Գովրիկեան (1840–1931): Սկսած 1888–1911 թթ. ի պատիւ «Հանդէս ամսօրեայ»-ի իր էջերը լայնօրէն բացեց Հ. Գովրիկեանի բեղմնաւոր աշխատակցութեան առաջ: Նա. Ա. Բ., Բ., . . . էս, . . . վրիգ, Յովհան Անեցի, Փիբաս Ա., Թղթակից եւ այլ կեղծանուններով աւելի քան 140 համարներում ողողեց իր յօդուածներով: Գովրիկեանի իրարյաջորդ յօդուածաշարերից կազմուեցին առանձին մենագրութիւններ, իբրեւ նոյն Միաբանութեան «Ազգային Մատենադարանի» ԺԱ., ԺԲ., ԼԳ., եւ ինք. հատորները¹, չորս գրքերը միասին կազմելով աւելի քան 2000 էջեր: Տրանսիլվանիայի հայերի երկու հայաքաղաքներին նուիրած Հ. Գր. Գովրիկեանի մենագրութիւնները տարբեր արժէք ունեցան: Եթէ Գեուլային իր նուիրած մենագրութիւնը շատ հակիրճ է եւ հիմնականում յենւում է Պ. Սոնգոտեանի համանուն մենագրութեան վրայ, ապա նոյն Հ. Գովրիկեանի Նիսաբէթուպուսի նուիրած երեք ստուար հատորները, որոնք միասին վերցրած կազմում են աւելի քան 1700 էջ, անվիճելիօրէն կարելի է համարել յիշեալ հայաքաղաքին նուիրուած մի գլուխ գործոց եւ որ հեղինակին արժանացրեց Իզմիրեան մրցանակին: Սոյն գործը, ինչպէս իր նորայայտ վաւերագրերի մեծ թիւով, այնպէս էլ նիւթերի ընդգրկման խորութեամբ մեծ չափով գերազանցում է մեր նախապէս յիշատակած Դ. Աւետիքեանի հունգարալեզու գիրքը: Իր այս գործով Հ. Գովրիկեանին կարելի է արժանացնել Նիսաբէթուպուսի պատմահայր պատուանունին:

Սակայն հակառակ իր տիտանական աշխատանքի Հ. Գովրիկեան համեստօրէն նշել է, որ ինք միայն 900-ից աւելի վաւերագրեր է հետազօտել իր այս գործի համար² եւ դարձեալ ինք գրել է, որ «Նիսաբէթուպուսոյ հայաքաղաքին դիւանատան մէջ շուրջ 70–80.000

¹ Հ. Գր. Գովրիկեան, Հայք յՆիսաբէթուպուսի Դրանսիլուանիոյ, 1680–1779, Վիեննա, 1893 թ., 533 էջ: Նոյնի. հատոր Բ., 1780–1825, Վիեննա, 1899, 554 էջ: Նոյնի հատոր Գ., Վիեննա, 1904, 1826–1904, 658 էջ: Նոյնի Դրանսիլուանիոյ Հայոց Մետրապոլիսը կամ նկարագիր Կելոյ Հայաքաղաքի ի գիր եւ ի պատկերս. Վիեննա, 1896, 352 էջ:

² Ա. Բ. իմա Գովրիկեան «Դրանսիլուանիոյ Նիսաբէթուպուսի քաղաքին դիւանատունը, «Հանդէս ամսօրեայ», 1911, էջ 448:

կտոր այլեւայլ լեզուով եւ այլոց տեսակի վաւերագրեր կան, որոնք իր ժամանակ ցիր ու ցան էին»³: Այդ մասին նա դարձեալ ակնարկում է իր Գ. հատորում, գրելով «Ու թէպէտ առաջիկայ գործքը լմնցուցած եմ, – այսու ամենայնիւ պէտք եմ խոստովանել թէ ըրածս թերի է: Վասն զի թէեւ շատ նիւթ բովանդակուած է իր մէջ՝ բայց եւ այնպէս, ժողովածս ու քովէ քով բերածս, պզտիկ մաս մըն է. . . : Որոնց, կարծեմ, եւ ոչ հարկւրերորդ մասն առնուած է գործոյս մէջ»⁴:

Սակայն այն ինչ Հ. Գր. Գովրիկեան արել է մեծ ջանասիրութեամբ եւ նուիրումով շատ բան է փրկել եւ ապագայի երկասիրողների համար յանձնել է տպագրութեան: Անշուշտ, առանց Հ. Գր. Գովրիկեանի անխոնջ աշխատանքների եւ «Հանդէս ամսօրեայ»-ի հիւրընկալութեան, այժմ շատ բան կորած կարող էր լինել անդարձ կերպով: Հր. Գր. Գովրիկեան ըստ ամենայնի գիտակցելով իր կատարած գործի մեծ նշանակութեան, նշել է դարձեալ. «Մեր կրցածն ըրինք, գործելու ասպարէզը բացինք, սկիզբն ըրինք, անտաշ ճամբան հարթեցինք: Մեզմէ ետքն եկողները զանիկա շարունակեն, պակասը լեցնեն: – Իրենց համար անսպառ գանձ մը դիզուած կեցած է, չէ թէ միայն քաղաքիս, հապա նաեւ մէկալ ազգային տեղեաց – Կեուլայի, ճուրճով սէնդ Միդուշի, Սէվիդի եւ Տրանսիլվանիոյ ուրիշ քանի մը քաղաքներու դիւանատանց մէջ»⁵:

Հ. Գր. Գովրիկեան իր վերոյիշեալ երկը գրել է ջերմ հայրենասիրութեամբ եւ յաճախ էլ լայնախոհութեամբ: Նա մէջ բերելուց առաջ մի վաւերագիր կապուած Բաշլեալով, (ապա Նիսաբէթուպուսի) ի հայերի մօտ տեղի ունեցած դաւաճաբանական վերիվայրումներին, եզրակացնում էր գրելով. «Պատմութիւնը մերը չէ, ժամանակինն է: Ձեռք կրնար չեղածն՝ եղած ու եղածը չեղած անել: Իբրեւ պատմագիր, գուցէ այսօրուան օրս այսպիսի ճամարտութիւններ, այս կերպով երեւան չէինք հաներ: Բայց որովհետեւ պատմութիւնը՝ պատմութիւն է, ու յիշատակարանը՝ յիշատակարան, հարկ է, որ բոլոր արձանագրութիւնն, իր ամբողջութեամբ,

գուցէ տեղ տեղ կսկիծ պատճառող քանի մը կէտերովն – արդարասիրութեամբ՝ ընթերցողաց առջեւ դնենք»⁶:

Սակայն յիշեալ հատորներով չաւարտուեց Հ. Գր. Գովրիկեանի գործը նուիրուած Տրանսիլվանահայ գաղութին: Նա տարիներ շարունակ «Հանդէս ամսօրեայ»-ի էջերում հրատարակեց տասնեակ, տասնեակ յօդուածներ ոչ միայն Տրանսիլվանիայի հայերի պատմութիւնը լրացնող, այլեւ վեր հանեց մեծ թուով այն կարկառուն դէմքերը, որոնք այդ գաղութը առատօրէն տուեց իր ծոցից ծառայելու համար հայութեան եւ Աւստրո-Հունգարիայի կեանքին: Այս գծով նա միաժամանակ իր աշխատակցութիւնը բերեց երբեմն նաեւ ծածկանուններով «Բազմավէպ»-ին, «Պատկեր»-ին եւ մանաւանդ Գեուլայի «Արմենիա»-ին: Հ. Գր. Գովրիկեան միաժամանակ իր բովանդակ կեանքի ընթացքում ջերմ պաշտպան կանգնեց Տրանսիլվանիայի հայերի ներսում հայրենի աւանդոյթների եւ հայ ծէսի պահպանման: Նա անդրդուելիօրէն յամառ պայքար է մղել Տրանսիլվանիայի հայերի ազգային հոգեւոր առաջնորդութեան վերականգնման համար, քանի որ ինք իբրեւ աւանդապահ հայերի պարագլուխներից, համոզուած էր, որ վերջինիս վերահաստատումը նպաստելու է հայ գաղութի գոյատեւման:

Երբ խօսում ենք Հ. Գր. Գովրիկեանի բերած բեղմնաւոր աշխատակցութեան մասին «Հանդէս ամսօրեայ»-ին, չենք կարող մոռանալ նաեւ այն իրողութիւնը, որ այս տարի լրանում է նաեւ Գեուլա հայաքաղաքում լոյս տեսած «Արմենիա» հունգարերէն հայագիտական ամսագրի հիմնադրման 100-ամեակը: Մենք կարծում ենք, որ վերջինի խմբագիր-հրատարակիչ անձնուրաց Պ. Սոնգոտեան շատ բան է պարտական իր այդ քայլը առնելու մէջ «Հանդէս ամսօրեայ»-ին եւ անձամբ Հ. Գր. Գովրիկեանի, քանի որ նա ողբերգեց եւ թիկունք կանգնեց նրան, միասին հրատարակեցին «Արմենիա»-ի հրատարակման ծանուցագիրը եւ սկզբնական շրջանին երկուսի անունով լոյս տեսաւ այն: Սակայն անգամ իր բազմազբաղ վիճակում ստիպուելով հրաժարուել հանդէսին համախմբագիր լինելուց, Հ. Գր. Գովրիկեան մինչեւ վերջ իր կապը անբաժան

³ Անդ, էջ 290:

⁴ Հ. Գր. Գովրիկեան, Հայք յՆիսաբէթուպուսի . . . , Գ.

էջ 6–9:

⁵ Հ. Գր. Գովրիկեան, Հայք յՆիսաբէթուպուսի . . . , Գ.

էջ 9:

⁶ Անդ, Բ, էջ 151:

նի «Հայագգի երեսիդիսանք ի Հունգարիա»²² (ուր ներկայացնում է Հայագգի ինը պետական գործիչների կենսագրությունները), ինչպես նաև Հ. Ա. Ջնտոյեանի «Կերլա հայաքաղաքին» «Հայկական թանգարանի բացումը» եւ «Հունգարիայի հայոց եպիսկոպոսութեան խնդիրը» յօդուածները²³: Հ. Ա. Ջնտոյեան սքանչանալով Տրանսիլվանիայի աւանդապահ հայերի բացառիկ կամքի եւ հայրենասիրութեան վրայ, Գեռլայից 1910 թուականին գրում էր. «Հայուն կեանքը որչափ տոկուն ու կենսական եղած է, որ դարաւոր շրջաններ ընելով հանդերձ փոխանակ մինչեւ ցայժմ բնական ճամբով օտարութենէ պարտուած, պատմական ճամբան բռնած ըլլալու, ահա կարծես ոգի ի բոլին կը մաքաւի մահուան դէմ եւ դեռ կենսական կեանք մը ձեռք ձգելու կ'աշխատի»²⁴:

«Հանդէս ամսօրեայ»-ն լայնօրէն արձագանգել է նաեւ Տրանսիլվանիայի հայերի ազգային եպիսկոպոսութեան վերականգման եւ ինքնուրոյնութեան պահպանման համար կատարուած նոր դիմումին: 1910 թ. հոկտ. 28-ին

²² «Հանդէս ամսօրեայ», 1892, էջ 108–111:

²³ «Հանդէս ամսօրեայ», 1910, էջ 245–248:

²⁴ Անդ:

Տրանսիլվանիայի եւ Հունգարիայի հայերի պատուիրակութիւնը գլխաւորութեամբ Վիեննայի Միսիթարեան Միաբանութեան արքայազներ. Հ. Գր. Գովրիկեանի ժամանեցին Բուդապէս: Սակայն հակառակ Հ. Գր. Գովրիկեանի սրտառու խօսքերին եւ յանձնուած յուշադրին, նախարարը դարձեալ անլուծելի թողեց սոյն արդար խնդրանքը²⁵: Ինչպէս յայտնի է, այդ կարեւորագոյն հարցը բաւարարուեց միայն 1930 թ., երբ բովանդակ Ռումինիայի (այդ թւում եւ Տրանսիլվանիայի) հայ կաթողիկոս նորաստեղծ թեմի հոգեւոր առաջնորդ ընտրուեց Վիեննայի Միսիթարեան Միաբանութեան անդամ Հ. Սահակ Կոզեան: Տրանսիլվանահայ թեմի առաջին հոգեւոր առաջնորդ Օքսենտ վ. Վրդարեանի մահից, 1715 թուականից ի վեր, հակառակ հայերի գործադրած գերմարդկային ճիգերին, 215 տարի անց՝ հազիւ նոր էր ստեղծուած անկախ հայկական եպիսկոպոսութիւնը, երբ դժբախտաբար Տրանսիլվանիայի փառաւոր հայ գաղութը արդէն իսկ սկսել էր անցնել պատմութեան գիրկը:

ՍՈՒՐԷՆ ՔՈԼԱՆՋԵԱՆ

²⁵ «Հանդէս ամսօրեայ», 1910, էջ 353–358:

DAS TETRAEVANGELIAR COD. 308 IN DER BIBLIOTHEK DER MECHITHARISTEN-CONGREGATION ZU WIEN

In der Bibliothek der Mechitharisten-Congregation zu Wien wird ein Tetraevangeliar aufbewahrt, dessen Illuminationen für die Buchmalerei der Armenier in Persien in den beiden letzten Jahrzehnten des 16. und in den beiden ersten Jahrzehnten des 17. Jahrhunderts charakteristisch sind und das aus diesem Grunde hier vorgestellt werden soll: cod. 308¹.

Wie es in Armenien üblich ist, geben Kolophone über die wesentlichen Tatsachen genaue Auskunft. Der Hauptkolophon beginnt mit einer langen Doxologie auf fol. 333r; er setzt dann fort: Ein Ninifar hat das Evangelium zum Gedenken seiner Seele gewünscht. Es ist wunderschön und zu bewundern, auch in der winterlichen Zeit Rosen zu sehen. fol. 333v: Es [das Evangeliar] wurde geschrieben im Jahre der Armenier 1037 [= 1588] durch die Hand des nichtswürdigen . . . Mesrop Erêc' in der Stadt, die da heißt Keli unter dem Schutz des hl. Grigor des Erleuchters während der Zeit des Herrn Łowkas, des rechtschaffenen und mutigen Rabownapet [Oberster der Rabbiner], der viel mit mir durchgestanden hat, um die heilige Schrift und die Illuminationen zu erlernen. Gott möge ihm dieses anrechnen. Gedenket in euren heiligen Gebeten auch meines Meisters, des Diakon Jakob und seines anmutigen Bruders, des Astowacatowr, und gedenket meines Vaters, des Pilgers Têr Małak' [Malachias] und meiner Mutter Mariam, des Toros, des Melmeiner Mutter Mariam, des Xamzatown, die zu kön und meiner Braut Xamzatown, die zu Gott gegangen ist und uns daher Trauer bereitet hat, und der Towrvanta, meiner Ehefrau,

und meiner Schwestern Axəpaša, Ana Siram, Towrač und Šnofor, sowie derjenigen, die in Christus ruhen. Amen.

fol. 334v:

Gedenket auch des Baxdišat in Christus und gedenket in euren Gebeten des Ninifar und seiner Ehefrau Karim und seines Sohnes Nowričan und seiner Tochter Xansowltan und seiner Gattin Xotaverti, die in Christus entschlafen sind und der Frau von Hovanês namens Kowlvarixan und der Eltern Antanês und Šarxaŋown und des Bruders Hawrtan und aller Blutsverwandten. Der Besteller hat es bekommen aus seinem gerechten Lohn und hat es an die Tür von Sowrb Astvacacin zum Andenken für sich und seine Eltern gegeben in der Stadt, die da heißt Erzurum [Erzurum].

fol. 121r:

Gedenken in Christus dem Herrn.

fol. 164v:

Brüder, die ihr das hl. Evangelium lest, Gott möge sich des sündigen und nichtswürdigen Schreibers erbarmen Mesrop Erêc'.

Die Handschrift ist in Keli durch einen Mesrop Erêc' für einen Ninifar kopiert und illuminiert worden im Jahre der Armenier 1037 (= 1588) und sie wurde 1862 bereits von Pater Mesrop Caŋikean aus Smyrna/Izmir lange vor der vandalischen Zerstörung der Stadt im Jahre 1922² nach Wien gebracht. Die Handschrift besteht aus festem, sorgfältig geglättetem Papier, sie hat eine orientalische Bindung. Der Holzdeckel ist mit einem Leder einband überzogen, der eine Musterung in Blindprägung enthält. Spuren weisen darauf hin, daß die Handschrift einst mit Metallapplikationen verziert gewesen ist, die aber alle verlorenggegangen sind. Die Handschrift umfaßt 335 Blatt; sie hat eine Größe von 210 × 150 mm. Der Evangelientext ist in schwarzer

¹ P. J. Tašan, *Catalog der armenischen Handschriften in der Mechitharisten-Bibliothek zu Wien* (Haupt-Catalog der armenischen Handschriften, hrsg. von der Wiener Mechitharisten-Congregation, I, 2) Wien 1895, S. 160, 735f. – Heide und Helmut Buschhausen, *Armenische Handschriften der Mechitharisten-Congregation in Wien*. Katalog zur Sonderausstellung in der Österreichischen Nationalbibliothek. Wien 1981, S. 170f, Nr. 38.

² M. Housepian. Smyrna 1922. *The destruction of a city*. London 1972.